ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

6 սեպտեմբերի 2019թ. թիվ 1333

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 276 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության գրասենյակի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 02/45.7/40664-2019 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ն ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 276 հրամանի հավելվածի «1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար (65-1.1-1)» և «2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ (65-1.2-1)» տողերը շարադրել նոր խմբագրությամբ՝ «1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար (95-Ղ2-1)» և «2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ (95-Ղ3-1)»:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի (95-Ղ2-1) և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի (95-Ղ3-1) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 6
ք.Վանաձոր